ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2022-2024թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-մարտ)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024թ. մարտի 31-ին 2023թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 114.3%, 2023թ. մարտի 31-ին 2022թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 111.4 %, իսկ 2022թ մարտի 31-ին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 109.7%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ.մարտի 31-ին կազմել է 723 մլրդ 685 մլն դրամ, ինչը 2023 թ նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 167 մլրդ 139.2 մլն դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 172 մլրդ 962.9 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. մարտի 31-ին կազմել է 72 մլրդ 195.4 մլն դրամ, ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7մլրդ 368 մլն և 16 մլրդ 238.3 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2024թ. մարտի 31-ին կազմել է 1 տրլն 238մլրդ 169.2 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 230 մլրդ 289.4 մլն և 457 մլրդ 020.1 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. մարտի 31-ին կազմել է745 մլրդ 590.6 մլն դրամ , ինչը 2023 և 2022թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 70 մլրդ 385.5 մլն և 242 մլրդ 379.9 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. մարտի 31-ին 2023 թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 130.4%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 103.6 %-ի և 103.1%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2024թ. մարտի 31-ին 2023թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 112.2 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 115.6 %-ի և 106.2 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2024թ մարտի 31-ին 2023թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 126.5% 2023-2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 121 %-ի և 107.6 %-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2024 մարտի 31-ին 2023թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 105.%, 2023 և 2022 թվականների ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 122.9 %-ի և 122.2%-ի պարագայում:
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. մարտի 31-ին կազմել է 104 մլրդ 802. 5 մլն դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 11 մլրդ 413.6 մլն դրամով, 2022 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 39 մլրդ 927 մլն դրամով: Մշակող արդյունաբերու-թյան մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024 թ. մարտի 31-ին կազմել է 509 մլրդ 993.4 մլն դրամ, ինչը 2023 թ և 2022 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 170 մլրդ 318.5 մլն և 206 մլրդ 174.3 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2024թ. մարտին կազմել է 101մլրդ 777.7 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2023թ. ցուցանիշից ավել է 7 մլրդ 741. 4 մլն դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5 մլրդ 429.3 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. մարտի 31-ին կազմել է 7մլրդ.111.4 մլն դրամ, ինչը 2023թ. և 2022թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 492.9 մլն և 1 մլրդ 286.3 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ.մարտի 31-ին, 2023 թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 95.4%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.8%-ի և 87.1 %-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. մարտի 31-ին 2023թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 147 .6 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.1%-ի և 110.9 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. մարտի 31-ին 2023թ. մարտի 31-ի նկատմաբ կազմել է 113.3 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.3 %-ի և 103.3 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. մարտի 31-ին 2023թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 106.6 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.6%-ի և 106.7 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ.մարտի 31-ին կազմել է 65 մլրդ 788.8մլն դրամ, ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1մլրդ 443.2. մլն և 3 մլրդ 304.7 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. մարտի 31-ին կազմել է 138մլրդ 804.3մլն դրամ, ինչը 2023թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է` 4 մլրդ.119.1 մլն դրամով ,իսկ 2022 թ-ի մարտի 31-ի համեմատ` ավել է 46 մլրդ 279.4մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայություննրի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. մարտի 31-ին կազմել է 237 մլրդ, 363.8 մլն դրամ ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 51 մլրդ 444.3 մլն և 102 մլրդ 47.3 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. մարտի 31-ին 2023թ մարտի 31-ին նկատմամբ կազմել է 101,3%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.6 %-ի և 102.9 %-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. մարտի 31-ին 2023թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 97,1%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 154.3 % և 125 6 %-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. մարտի 31-ին 2023թ. մարտի 31-ի նկատմամբ կազմել է 119. 5%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118.5%-ի և 114.1%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2024թ. մարտի 31ին 2023թ մարտի 31-ի նկատմամբ կազմել է 98.8 %, 2023թ մարտի 31-ին, 2022թ նույն ժամանակաշրջ. նկատմամբ` 107.2%, 2022թ. փետրվարին 2021 թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ` 107 %: ՍԳԻ-ն 2024թ. մարտի 31-ին 2023թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 100.2%, 2023թ. մարտի 31-ին` 2022թ.դեկտեմբերի նկատմամբ` 100.8 %, 2022թ. մարտի 31-ին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ` 103,5%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2024թ. մարտի վերջի դրությամբ կազմել է 966 մլրդ 639 մլն դրամ, ինչը 145 մլրդ 993 մլն դրամով կամ 13.1 %-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից 71մլրդ 730 մլն դրամով կամ 6,9%-ով 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2024թ. մարտի 31 ի դրությամբ կազմել է 63932 մարդ, ինչը 2301 մարդով կամ 3.5 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 18553 մարդով կամ 22.5%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2024 թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 45663 մարդ, ինչը 1618-ով կամ 3,4.%-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 10841 մարդով կամ 19.2 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2024թ. մարտի 31-ին կազմել է 9 մլրդ 169.7 մլն. ԱՄՆ դոլար, ինչը 4 մլրդ 842.5 մլն դոլարով կամ 111.9 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7 մլրդ 68.6 մլն. դոլարով 336.4 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Արտաքին առևտրի բացասւ. հաշվեկշիռը 2024թ մարտին կազմել է է - 324.1 մլն դոլար, ինչը 749.4 մլն դոլարով կամ 69.8 %-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 307 մլն դոլարով կամ 48.6 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2024 թ.մարտին կազմել է 4422.8 մլն դոլար, ինչը 2795.9 մլն.դոլարով կամ 171.9 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3687.8 մլն դոլարով կամ 501.7 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2024թ. մարտի 31-ին կազմել է 4 մլրդ 746.9 մլն դոլար, ինչը 2046.5 մլն. դոլարով կամ 75.8%-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3380.8 մլն դոլարով կամ 247.5 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2024թ. մարտի 31-ին կազմել է 307665 դրամ, ինչը 46170 դրամով կամ 17.7 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 94898 դրամով կամ 44.6 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
2024թ. մարտի 31-ին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -890.7 մլն դրամ ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը` 30 մլրդ 342.6 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը` -29մլրդ 451.9 մլն դրամ: 2023թ. մարտի 31-ին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 60 մլրդ 920. 9 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -139.9 և -60,781,0 մլն դրամ: 2022թ. մարտի 31-ին պետական բյուջեի հավելուրդը կազմել է 28մլրդ 674.6մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -6,443.5 և -22,231.1 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ